ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ
«Զ ԷՍ ՏՈՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՆԵԼԻ ՄԱՐԱԲՅԱՆԻՑ

Հարգելի՛ պրն. Խուդաթյան,

Այս նամակով ցանկանում եմ **հրավիրել** ՀՀ Արմավիրի մարզպետարանին ու իր ենթակայության տակ գտնվող կառույցներին **մասնակցելու ա.թ ապրիլի 27-ին և 28-ին Մերիդիան Էքսպո Կենտրոնում** կայանալիք լավագույն գործատուների փառատոնին՝ **Career City Fest 2K24-ին,** որը մենք՝ Skill Event Marketing Company-ն, կազմակերպում ենք արդեն երրորդ անգամ:

Career City Fest-ը լավագույն գործատուների ամենամյա փառատոն է, որը մեկ հարթակում միավորում է ՀՀ առաջատար ընկերություններին, փորձագետներին, կրթական հաստատություններին, պետական և հասարակական կազմակերպություններին ու աշխատաշուկայի ներկայացուցիչներին: **2023թ**. **ապրիլի 28-29-ը** միջոցառումն իր շուրջը համախմբեց ավելի քան **70 ընկերությունների ու կազմակերպությունների և 7000-ից ավել այցելուների**:

Հաշվի առնելով միջազգային առաջատար փորձը, որտեղ նմանատիպ միջոցառումների կենտրոնական դերը ստանձնում են պետական կառույցները՝ որպես լավագույն գործատու, ցանկանում ենք ՀՀ Արմավիրի մարզպետարանին ևս տեսնել այդ կարգավիճակում մեր միջոցառման շրջանակներում, քանի որ մենք կարծում ենք, որ Դուք հանդիսանում եք լավագույն գործատու, ինչպես նաև ունեք միջոցառումների մասնակցության հսկայական փորձ:

Մեծ ոգևորությամբ ցանկանում ենք Ձեզ տեղեկացնել, որ **Career City Fest** լավագույն գործատուների փառատոնը նոմինացվել է միջազգային հեղինակավոր **Eventex Awards**-ին, ընդ որում **Career City Fest 2K23**-ն առաջին միջոցառումն է Հայաստանից, որը նոմինացվել է այս հեղինակավոր մրցանակաբաշխությանը, այն էլ միանգամից երկու անվանակարգերում. **«Լավագույն ցուցահանդես»** (The Best Fair) և **«Հանրային քվեարկությամբ լավագույն միջոցառում»** (The Best People Choice Event):

Շնորհակալ կլինենք, եթե աջակցեք մեզ և ստորև բերված QR կոդով քվեարկեք մեր օգտին՝ Հայաստանի Հանրապետության անունից ևս մեկ անգամ հաղթանակ գրանցելու նպատակով, ինչպես նաև նպաստեք ակտիվ քվեարկությանը՝ ձեր ներքին ռեսուրսներով:

Սիրով պատրաստ եմ Ձեր թիմի հետ քննարկել համագործակցության Ձեզ հարմար տարբերակներ, որոնք համընթաց կլինեն Ձեր գործունեությանը և կնպաստեն միջոցառման արդյունավետության բարձրացմանը:

Կանխավ շնորհակալ եմ տրամադրած ժամանակի, բովանդակությանը ծանոթանալու և մեդիա հարթակում օժանդակության համար:

Հարգանքով՝ Ն. Մարաբյան

«27» մարտի 2024